

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

**[Մ]-[Ն] ԳՐԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ****DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i73.245****ԱՄՓՈՓՈՒՄ**

Հոդվածում անդրադարձ է կատարվել ժամանակակից գրական արևելահայերենի քերականության հետաքրքիր մի իրակության՝ [Մ]-[Ն]-ի ուղղագրության և ուղղախոսության դրսևորումներին:

Չնայած դասական գրական լեզվի ուղղագրությունը ընդհանուր առմամբ հիմնված է եղել «մեկ հնչյունին՝ մեկ տառ» սկզբունքի վրա, այդ ժամանակաշրջանի ձեռագիր մատյանները վկայում են ուղղագրական տարբերակների առկայության մասին, որոնք պայմանավորված են փոխազդեցական հնչյունափոխությամբ և գրավոր լեզվի վրա դրանց ազդեցությամբ: [Մ]-[Ն]-ի ուղղագրությունն ու ուղղախոսությունը նույնպես ենթարկվել են նման ազդեցությունների:

Ժամանակակից հայերենում [Մ]-[Ն]-ի գրության հստակ կանոններ գոյություն ունեն, սակայն ուղղախոսության մեջ հաճախ նկատելի են շեղումներ, որոնք կարող են դժվարություններ ստեղծել դրանց ճիշտ գրության հարցում: Հեղինակն ընդգծում է բառի կազմության կարևորությունը, առաջարկում հետևել ուղղագրական կանոններին և դիմել ուղղագրական բառարանների օգնությանը:

Բանալի բառեր և արտահայտություններ. ուղղագրության տեսակներ, տարաժամանակյա և համաժամանակյա գործոններ, առնմանում և տարնմանում, գրության և արտասանության շեղումներ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրական լեզուն հանդես է գալիս գրավոր և բանավոր ձևերով, որոնց համար համապատասխանաբար գործում են ուղիղ գրելու կամ ուղղագրական և ուղիղ խոսելու կամ ուղղախոսական կանոններ: *«Առաջին դեպքում հնչույթների համակարգից գնում են դեպի գրույթների համակարգ, երկրորդ դեպքում վարվում են հակառակ ձևով: Այսպիսով՝ ուղղագրությունը արտահայտաբանության այն բաժինն է, որ սահմանում է հնչույթները գրության մեջ ուղիղ արտահայտելու՝ ուղիղ գրելու կանոնները: Ուղղախոսությունը արտահայտաբանության այն բաժինն է, որ սահմանում է հնչույթները ուղիղ արտասանելու, հնարավոր արտասանական տարբերակներից ուղիղ ընտրություն կատարելու կանոնները»* (Զահուկյան Գ., 1974):

Հոդվածում անդրադարձ է կատարվել ժամանակակից գրական արևելահայերենի [Մ]-[Ն]-ի ուղղագրությանը և ուղղախոսությանը՝ ցույց տալով դրանց դրսևորումները բառի տարբեր դիրքերում, ժամանակի ընթացքում այդ հնչյունների կրած փոփոխությունները: Նյութը ներկայացվում է [Մ]-[Ն]-ի ուսուցման արդյունավետության բարձրացման, ճիշտ գրելու և ընթերցելու կապն ապահովելու նպատակով:

Լեզվական միջավայրի փոփոխությունն ստեղծել է մի իրողություն, երբ հաճախ խախտվում են քերականական նորմերը: Եվ առաջ է գալիս նորմի պահպանման անհրաժեշտություն: Իսկ գրագիտության մակարդը կրթության որակի ցուցիչ է: Թվային հաղորդակցության պայմաններում այս երևույթներն ավելի տեսանելի են դարձել, ինչն էլ կարևորում է նորմի և իրական գործածության համադրական քննությունը: Այս հանգամանքով է պայմանավորված նյութի արդիականությունը: Մեր կողմից փորձ է արվել համակողմանի ու հանգամանալից ներկայացնելու [Մ]-[Ն]-ի ուղղագրական և ուղղախոսական անհամապատասխանությունները, ցույց տալու, թե ո՞ր դեպքերում է արտասանությունն ազդում գրության վրա, որոնք էլ պատճառ են դառնում գրության և արտասանության դժվարությունների:

[Մ]-[Ն]-ի ուղղագրությանը և ուղղախոսությանն անդրադառնալը ոչ միայն **տեսական**՝ հնչյունաբանական խնդիր է, այլև կիրառական նշանակություն ունեցող քայլ ուղղագրական գրագիտության համատեքստում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նյութը քննելիս կիրառվել են մի շարք մեթոդական հնարներ՝ կորպուսային վերլուծություն (թեստային կամ գրավոր նյութերի (դասագրքեր, ուսանողական աշխատանքներ, գրառումներ սոցիալական ցանցերում) ուսումնասիրություն), հնչյունաբանական մեթոդ ([Մ]-[Ն]-ն բառի տարբեր դիրքերում, հարակից հնչյունների ազդեցություն), համաբանական և հակադրական մոտեցումներ և վարժություններ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ժամանակակից հայերենի ուղղագրության հիմքում ընկած են **հնչույթային**, ավելի քիչ չափով՝ **ավանդական**, համեմատաբար փոքր դրսևորում ունեն **ձևաբանական** սկզբունքները (**Ջահուկյան, 1974; Պետրոսյան, 1987; Գրիգորյան, 1956**):

Ժամանակակից հայերենի բաղաձայնների մի մասի գրությունն ու արտասանությունը որոշ դեպքերում տարբեր են: Այդ բաղաձայնները ճիշտ գրելու համար անհրաժեշտ է իմանալ որոշակի կանոններ: «Սակայն երբեմն *հանդիպում են դեպքեր, որոնք ոչ թե կանոններով են նախատեսված, այլ պարզապես հնչյունների ոչ ճիշտ արտասանության կամ այլ հնչյունների արտասանական ազդեցության հետևանք են*» (**Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ., 2009**):

[Մ]-[Ն]-ի գրությունն ու արտասանությունը հիմնականում համապատասխանում են իրար, օրինակ՝

- բամբասել, համբույր, համբերել, համբարձում, Սամվել, սիմֆոնիա, ամֆիթատրոն, կամք, հիմնել, նման,
- անվարան, բանտ, հանդես, հանկարծ (**Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., 2008**):

Մյուս ձայնորդ հնչյունների նման (հայերենում ձայնորդ են *մ, ն, յ, լ, ռ, ռ* բաղաձայնները (**Պետրոսյան Հ., 1987**) [Մ] և [Ն] հնչյունները բառասկզբում, շատ դեպքերում նաև բառամիջում և բառավերջում անաղարտ են պահում իրենց արտասանությունը (**Գրիգորյան Ա., 1956**), «*չեն հակասում իրենց Մ, Ն տառերին, բացի Մ-ի և Ն-ի առնմանության ու տարնմանության դեպքերից*» (**Սևակ Գ., 1955**): Օր.՝

- **Բառասկզբում՝** *մայր, մարդ, մուկ, մկրապ, մանուկ, նապաստակ, նոր, նեղ* և այլն:
- **Բառամիջում և բառավերջում՝** *գամփռ, քամի, ճամփա, տոմս, գինի, հենարան, ճանապարհ, կայան, սեղան, պահարան, աշխատանք, երազանք* և այլն:

Սակայն ժամանակակից գրական արևելահայերենում [Մ] և [Ն] հնչյունները, ըստ արտաբերության տեղի մոտ լինելով, ուղղագրական դժվարություններ են ստեղծում, մանավանդ երբ նախորդում են **բ, ա, փ** պայթական բաղաձայններին: Ստորև ներկայացնենք [Մ]-[Ն]-ի գրության կանոններն ու արտասանական շեղումները:

Հայտնի է, որ հայերենում **բ, ա, փ** բաղաձայններից առաջ գրվում է [Մ]: Օր.՝ *ամպ, ըմպանակ, ըմպել, ամբար, ամբարիշտ, բամփել, գամփռ* և այլն: Այդ բաղաձայններից առաջ [Ն] է գրվում միայն **ան-** ժխտական նախածանցով կազմված բառերում: Օր.՝ *անբան, անբասիր, անբերրի, անբիժ, անպատեհ, անպատասխան, անփարատելի, անպատիվ, անփույթ* և այլն (**Ավագյան Մ., 2017**):

[Ն] է գրվում նաև այն դեպքերում, երբ [Ն]-ով ավարտվող բառը բարդվել է **բ, ա, փ**-ով սկսվող մեկ այլ բառով: Օր.՝ *դռնփակ, դռնբաց, ձեռնբաց, ձեռնփակ* և այլն:

Մյուս դեպքերում շրթնային **բ, ա, փ** բաղաձայններից առաջ գրվում է [Մ]: Օր.՝

ա. բ-ից առաջ.

Ակումբ, ամբար, սուսամբար, ամբարձիչ, ամբարտաշ, ամբաստանել, ամբարտաշան, ամբիոն, ամբոխ, անձամբ, ապստամբել, արամբի, ըմբռնել, բամբակ, բամբասել, բամբիռ, գմբեթ, դամբարան, դամբուլ, թմբուկ, համբուրել, զամբիկ, զամբյուղ, համբերել, շամփուր և այլն:

բ. պ-ից առաջ.

Ամպ, ամպրոպ, ըմպանակ, ըմպել, լամպ, ճամպրուկ, շամպայն, շիմպանզե, պոմպ, վամպիր, ումպ և այլն:

գ. փ-ից առաջ.

Ամփոփել, բամփել, գամփո, թրմփալ, խռմփալ, ճամփա, շամփուր, շրմփոց, փրորումփոց և այլն:

Այս բաղաձայններից առաջ **[Մ]-[Ն]**-ի արտասանությունը երբեմն նույնական է լինում, որն էլ ուղղագրության մեջ դժվարություններ է ստեղծում (**Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ., 2009**):

Հաճախ հետընթաց թերի տարնմանման հետևանքով շրթնային **բ, պ, փ** հնչյունների ազդեցությամբ **[Ն]** առաջնալեզվային-ննգային ձայնորդը բառարմատներում և դրանցով կազմվող բաղադրություններում գրվում է շրթնային-ննգային **[Մ]** տառով: Օր.՝ ամբար, ամպ, ամպել, ամպրոպ, ամբաստանել, ամբարտաշան, ամբիոն, ամբողջ, ամփոփել, բամբասել, գմբեթ, թամբ, զամբյուղ, թմբուկ, թումբ, լուսամփոփ, խումբ, կշտամբել, Համբարձում, համբավ, համբերել, համբույր, ճամփա, մասամբ, միությանբ, տրամվայ (**Ղարիբյան Ա., Պարիս Գ., 1957; Սևակ Գ., 1955**) և այլն:

Հետընթաց թերի առնմանման հետևանքով առաջնալեզվային-ննգային **[Ն]**-ն գրության մեջ շրթնային **բ**-ից առաջ վերածվել է շրթնային-ննգային **[Մ]-ի**: Օր.՝ անբարիշտ, ընդ/բռնել, ընդ/բերանալ և այլ բառեր գրությամբ վերածվել են ամբարիշտ, ըմբռնել, ըմբերանալ գրությունների: **Ըմբռնել և ըմբերանալ** բառերում նախ տեղի է ունեցել **դ** հնչյունի կորուստ՝ ընդ+բռնել>ըն+բռնել, ընդ+բերանալ>ըն+բերանալ, ապա հետընթաց թերի առնմանմամբ **[Ն]**-ն վերածվել է **[Մ]-ի**:

Հակառակ երևույթն էլ կա. **բ**-ից առաջ **[Ն]**-ն արտասանվում է **[Մ]**, թեև գրվում է **[Ն]**: Օր.՝ *անբախտ, անբարբառ, անբերրի* և այլն:

Ա ներքին հոլովման բառերի գործիական հոլովաձևերում **բ**-ից առաջ **[Ն]**-ն դարձել է **[Մ]**: Օր.՝ *ուրախություն-ուրախությամբ, արյուն-արյամբ, հիշողություն-հիշողությամբ*: Ընդ որում՝ առնմանման այս երևույթը գործել է դեռևս գրական լեզվի զարգացման դասական փուլում: Միայն այն գրիչները, որոնք գրել են ըստ բառի կազմության, ստուգաբանության, գործիական հոլովում պահպանել են **[Ն]** հնչյունի **[Ն]** գրությունը (**Գյուլբուդաղյան Ա., 1973**):

Արտասանության ժամանակ տեղի է ունենում առաջընթաց թերի առնմանում, որը գրության մեջ չի արտահայտվում. **[Մ]**-ի ազդեցությամբ **ա**-ն արտասանվում է **բ**: Օր.՝ *ամա-ամբ*: Կամ **[Ն]**-ի ազդեցությամբ **կ**-ն ձեռք է բերում է ձայնեղ հնչողություն: Օր.՝ *ընկեր-ընգեր, թանկ-թանգ*: Հին հայերենի **գանկ** բառը ևս **[Ն]**-ի ազդեցությամբ վերածվել է **գ**-ի՝ *գանգ*: Առաջին երկուսը խոսակցական-բարբառային արտասանություններ են և մերժելի ձևեր, իսկ երրորդը՝ գրական:

Հետընթաց լիակատար առնմանում է, երբ **[Մ]**-ի ազդեցությամբ **[Ն]**-ն արտասանվում է **[Մ]**: Օր.՝ *անմեղ-ամմեղ*: Երևույթը նկատելի է բարբառներում: Օր.՝ *Մին ամմեղ խոխա ա* - Մի անմեղ երեխա է: Կամ հակառակը, **բ, պ, փ** պայթականներից առաջ **[Մ]**-ն վերածվում է **[Ն]**-ի՝ *շանփուր, սեկրեներ, բնբուլ* և այլն:

[Ն]-ն, հնչյունափոխության հետևանքով ընկնելով պայթական բաղաձայններից առաջ, դառնում է **[Մ]**՝ *ճանապարհ-ճամփա*:

[Ն]-ն բարբառներում վերածվում է **[Մ]**-ի նաև հետևյալ բառերում՝ *անուն-անում/անըմ*, ազգանդամ-*ազկանդան* և այլն:

[Մ]-**[Ն]**-ի գրության ու արտասանության մեջ նկատելի է մի հետաքրքիր դրսևորում ևս: Հայերենում **[Ն]**-ին նախորդող **ռ**-ն **ռ** է հնչել և հնչում, գրվել և գրվում, ինչպես *գառն, դռն, բռն, Եղեռն, բառնալ, դառնալ* և այլն բառերում և դրանցից կազմված բաղադրություններում: Եթե հնչյունափոխության հետևանքով

ռ-ին այլ հնչյուն է հաջորդում, ապա այն վերածվում է **ր**-ի: Օր.[՝] *առնեմ-առարել*, *բառնամ-բարձրանալ*, *ծեռն-ծերբակալել*, *Եղեռն-եղերական* և այլն: **Ն**-ին կարող է **ր** նախորդել՝

ա. եթե **Ն**-ն հոդ է, և **ն**-ի և **ր**-ի միջև լսվում է չգրվող **ը** (սարըն, քարըն, դարըն),
բ. եթե հնչյունափոխության հետևանքով են **ն**-ն և **ր**-ն միմյանց հանդիպել (գարուն-գարնան):

Մ-ից առաջ, ընդհակառակը, միշտ գրվել ու գրվում է **ր**: Օր.[՝] *զարմ*, *թարմ*, *մարմին*, *սերմ*, *Արմեն* և այլն: **Ռ**-ն **Մ**-ի կողքին կարող է հայտնվել ածանցման, բառաբարդման, թեքման հետևանքով՝ *վառման*, *գրառման* և այլն (**Գյուլբուդաղյան Ս.**, 1973):

Կան մի շարք բառեր, որոնք գրական լեզվում արտասանության և գրության մեջ չունեն **Ն**: Դրանք են՝ *ամաչել*, *ավելորդ*, *արտասուք*, *ճանաչել*, *կանաչ*, *կանաչի*, *կամաց*, *զոքանչ* և այլն: Սակայն բանավոր խոսքում, բարբառներում հաճախ ենք հանդիպում այս բառերի **Ն**-ով արտասանությունների, ինչպես՝ *ամանչել*, *ավելնորդ*, *արտասունք*, *կանանչ*, *կանանչի*, *կամանց*, *ճանանչել*, *զոնքանչ* և այլն, որոնք մերժելի ձևեր են:

Հակառակ երևույթն էլ է նկատելի, երբ բառն ունի **Ն** գրությունը, իսկ բանավոր խոսքում այն սղում են, ինչպես **պատճեն** բառի դեպքում է. բառի վերջում անպայման արտասանվում և գրվում է **Ն**՝ *պատճեն*, *պատճենը*, *պատճեններ*, *պատճենահանել* և այլն:

Ֆիդայի բառի վերջում էլ ուղիղ ձևում հանիրավի գործածում են **Ն**՝ **Ֆիդային**, որը ևս մերժելի ձև է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով վերոշարադրյալից՝ կարելի է կատարել եզրակացություններ:

Մ-**Ն**-ի ուղղագրությանը վերաբերող բառերի գրության դեպքում անհրաժեշտ

- **Ուշադրություն դարձնել բառի կազմությանը:** Եթե բառը բաղադրյալ է, **բ, պ, փ** պայթականներից առաջ պետք է գրել **[Ն]** հնչյունը, ինչպես՝ **անբասիր, անբեկանելի, անպետք, անպատճառ, անփույթ, անփոփոխ** և այլն:
- **Ուշադրություն դարձնել բառի ծագմանը:** Փոխառյալ բառերի դեպքում օգտակար է իմանալ բնօրինակ լեզվի ուղղագրությունը, ինչպես նաև հետևել հայերենում գործող տառադարձության սկզբունքներին:
- **Շա՛տ կարդալ:** Շատ կարդալը օգնում է տեսողական հիշողության միջոցով ամրապնդելու բառի ճիշտ գրությունը:
- **Օգտվե՛լ ուղղագրական բառարաններից:** Ցանկացած կասկածի դեպքում բառը ստուգե՛լ ուղղագրական բառարաններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբեղյան Մ. (1974)**, Երկեր, հատ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
2. **Ավագյան Մ. (2017)**, Պատկերազարդ քերականություն. 4-րդ դասարան, Երևան, «Զանգակ» հրատ.:
3. **Ավետիսյան Յու., Զաքարյան Հ. (2008)**, Հնչյունաբանություն. ուղղախոսություն, ուղղագրություն, Երևան, «Զանգակ-97» հրատ.:
4. **Գյուլբուդաղյան Ս. (1973)**, Հայերենի ուղղագրության պատմություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:
5. **Գրիգորյան Ա. (1956)**, Հայոց լեզու. ձեռնարկ VIII-X դասարանների գործնական պարապմունքների համար, Երևան, «Հայպետուսմանկ» հրատ.:
6. **Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ. (2009)**, Հայոց լեզու. դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի տասներորդ դասարանի համար, Երևան, «Մանմար» հրատ.:

7. **Ղարիբյան Ա., Պարիս Գ. (1957)**, Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց, Երևան, «Հայպետտուսմանկ» հրատ.:
8. **Պետրոսյան Հ. (1987)**, Հայերենագիտական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ.:
9. **Ջահուկյան Գ. (1974)**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.:
10. **Սևակ Գ. (1955)**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:

REFERENCES

1. **Abeghyan M. (1974)**, Erker /Works/, Vol. VI, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR.
2. **Avagyan M. (2017)**, Patkerazard qerakanowt'yown. 4-rd dasaran /Illustrated Grammar: 4th Grade/, Yerevan, “Zangak” Publishing House.
3. **Avetisyan Yu., Zakaryan H. (2008)**, Hnchyownabanowt'yown. owghghaxosowt'yown, owghghagrowt'yown /Phonetics: Orthoepy, Orthography/, Yerevan, “Zangak-97” Publishing House.
4. **Gyulbudaghyan S. (1973)**, Hayereni owghghagrowt'yan patmowt'yown /History of Armenian Orthography/, Yerevan, Yerevan University Press.
5. **Grigoryan A. (1956)**, Hayoc lezow. d'er'nark VIII-X dasaranneri gorc'nakan parapmownqneri hamar /Armenian Language: A Manual for Practical Classes in VIII-X Grades/, Yerevan, “Haypetusmank” Publishing House.
6. **Ezekyan L., Sargsyan A., Sakapetoyan R. (2009)**, Hayoc lezow. dasagirq avag dproci y'ndhanowr & bnagitamat'ematikakan hosqeri tasnerord dasarani hamar /Armenian Language: Textbook for the Tenth Grade of General and Natural Sciences-Mathematics Streams of High School/, Yerevan, “Manmar” Publishing House.

7. **Gharibyan A., Paris G. (1957)**, Hayoc lezvi qerakanowt'yan, owghghagrowt'yan & ketadrowt'yan owghecowyc /Guide to Armenian Language Grammar, Orthography, and Punctuation/, Yerevan, "Haypetusmank" Publishing House.
8. **Petrosyan H. (1987)**, Hayerenagitakan bar'aran /Dictionary of Armenian Linguistics/, Yerevan, "Hayastan" Publishing House.
9. **Jahukyan G. (1974)**, Jhamanakakic hayereni tesowt'yan himownqnery' /Foundations of Modern Armenian Language Theory/, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR.
10. **Sevak G. (1955)**, Jhamanakakic hayoc lezvi dasy'nt'ac /Course of Modern Armenian Language/, Yerevan, Yerevan University Press.

Анаит Акобджанян

**Орфография и орфоэпия букв [М]-[Н] в современной системе
армянского языка**

Заключение

***Ключевые слова и выражения:** орфография и орфоэпия согласных, диахронические и синхронические факторы, ассимиляция и диссимиляция, орфографические и произношенческие отклонения.*

Статья посвящена орфографии и орфоэпии букв [М]-[Н] в современной литературной восточноармянской речи. Хотя орфография классического литературного языка в целом основывалась на принципе «один звук - одна буква», рукописные источники того периода свидетельствуют о существовании орфографических вариантов, обусловленных взаимодействующими фонетическими изменениями и их влиянием на письменный язык. Орфография и орфоэпия [М]-[Н] также подвергались таким влияниям.

В современном армянском языке правила написания [М]-[Н] чётко установлены, однако в орфоэпии часто наблюдаются отклонения, которые могут создавать трудности при правильном написании.

Автор подчёркивает важность морфологической структуры слова, рекомендует соблюдать орфографические нормы и использовать орфографические словари.

Anahit Hakobjanyan

**The Orthography and Orthoepy of the Letters [M]-[N] in the Contemporary
Armenian Language System
Conclusion**

Key words and expressions: *orthography and orthoepy of consonants, diachronic and synchronic factors, assimilation and dissimilation, spelling and pronunciation deviations.*

The article addresses the manifestations of orthography and orthoepy of [M]-[N] in contemporary literary Eastern Armenian. Although the orthography of the classical literary language was generally based on the principle “one sound - one letter,” manuscript sources from that period indicate the existence of orthographic variants caused by interactive phonetic changes and their influence on the written language. The orthography and orthoepy of [M]-[N] were similarly subject to such influences.

In modern Armenian, the rules for writing [M]-[N] are well established; however, deviations in pronunciation are often observed, which can create challenges in correct spelling.

The author emphasizes the importance of the morphological structure of words, recommends adherence to orthographic rules, and encourages the use of orthographic dictionaries.

Անահիտ Հակոբջանյան - Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի հայագիտության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզվի պատմության հարցեր: Հեղինակ է 30 գիտական աշխատանքների: anhak62@yahoo.co.uk:

Анаит Акобджанян - Кандидат филологических наук, доцент кафедры арменоведения Ереванский государственный университет имени В. Брюсова (им. Валерий Брюсов). Научные интересы включают вопросы истории армянского языка. Автор около 30 научных публикаций. anhak62@yahoo.co.uk:

Anahit Hakobjanyan - PhD in Philology, is Associate Professor at the Chair of Armenian Studies, Yerevan Brusov State University. Her research focuses on the history of the Armenian language. She is the author of approximately 30 scholarly publications. anhak62@yahoo.co.uk.

Խմբագրություն է ուղարկվել 21.02.2026թ.

Հանձնարարվել է գրախոսության 08.03.2026թ.

Հրապարակման է ներկայացվել 31.07.2026թ.